Շաբաթական ակնարկ 30.12.24

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

ԱՄՆ-ի բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն



ԱՄՆ-ի պարտատոմսերի շուկան երրորդ շաբաթն անընդմեջ արձանագրում է նվազող շաբաթ

Մեծածախ առևտրի պաշարների վերաբերյալ տվյալների հրապարակումը հանգեցրեց MAG 7-ի անկմանը



Մերձավոր Արևելքում լարվածության աճի ֆոնին նավթի գները բարձրացան մինչև 71 դոլարի



Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը աճեց 0.65 %-ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը աճեց 0.91 %-ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը աճեց 0.34 %-ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը աճեց 0.18 %-ով

Ինդեքսներ

Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան նախորդ շաբաթվա ընթացքում.

- Նախորդ շաբաթվա բարձր տատանողականությունը չխանգարեց, որ ԱՄՆ բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեն դրական եկամտաբերություն:
- Մակրոտնտեսական տվյալների հրապարակումը համահունչ չէր ֆինանսական շուկայի սպասումներին, քանի որ արձանագրվեցին սպասվածից ավելի թույլ արդյունքներ, սպառողների վստահության և երկարաժամկետ օգտագործման ապրանքների պատվերների վերաբերյալ տվյալներում:
- Այնուամենայնիվ, այս տարին շուկայի համար լավագույն տարիներից մեկն էր, քանի որ՝
- S&P500-ը աճեց 25.18%
- Nasdaq-ը աճեց 31.38%
- Dow Jones-ը աճեց 14.07%
- Russell 2000 աճեց 5.8%:



Փառահեղ յոթնյակի ինդեքսը կտրուկ անկում գրանցեց տոնական օրերից հետո, դրան նպաստեց ուրբաթ օրը մեծածախ առևտրային պաշարների վերաբերյալ հաշվետվությունը, որը ի սկզբանե ակնկալվում էր, որ դրական կլիներ, սակայն արձանագրեց անկում, արդյունքում Microsoft-ը և NVIDIA-ն ունեցան թույլ շաբաթ, որի արդյունքում էլ MAG 7-ը արդանագրեց բացասական եկամտաբերություն:



MAG 7-ի այս շաբաթվա անկումը չարտացոլվեց ինդեքսի ամբողջ տարվա կատարողականի վրա, քանի որ այն տարեկան կտրվածքով գրանցեց մոտ 68% եկամտաբերություն, իսկ MAG 7-ի որոշ բաղադրիչներ արձանագրեցին շուկայական կապիտալիզացիայի նոր ռեկորդներ, իչպիսին էր NVIDIA-ն, որն այս տարի աճեց մոտ 176%:

Բաժնետոմսերի շուկա| GLP & բաժնետոմսերի կատարողականը

Reddit-ի (RDDT) IPO-ն կայացավ 2024 թվականի առաջին եռամսյակում, ընկերությունն իր IPO-ից հետո ունեցավ 3.7 անգամյա աճ: Ըստ իր վերջին զեկույցի ընկերությունը (3-2024 թ.) ապահովել է գերազանց ֆինանսական ցուցանիշներ տարվա կտրվածքով, նրա զուտ շահույթը, հասույթը և մեկ բաժնետոմսի բաժին հասնող շահույթն աճել են համապատասխանաբար 504%, 67% և 223%-ով:

2024-ի վերջին եռամսյակում Service Titan-ը (TTAN) հաջողությամբ ավարտեց իր IPO-ն: Ըստ վերլուծաբանների ընկերության բաժնետոմսերը գնահատում էին մոտ $71, սակայն ընկերության բաժնետոմսերը երկրորդային շուկա մուտք գործելու օրը ցատկեցին գրեթե 40%-ով: Ընկերության վերջին ֆինանսական հաշվետվությունը եղել է 2024 թվականի 2-րդ եռամսյակի համար, որը նույնպես լավ արդյունքներ է ցույց տվել, նախորդ տարվա համեմատ:



Ինդեքսներ

- ԱՄՆ-ի պարտատոմսերի շուկան արձանագրեց ևս մեկ վաճառքի շաբաթ: Երկարաժամկետ (10 և 30 տարի) պարտատոմսերը բոլորից վատ կատարողականը ունեցան, իսկ կարճաժամկետ պարտատոմսերը (2 տարի) դրսևորեցին ավելի դրական արդյունքներ:
- Այս շաբաթվա անկման հիմնական պատճառը թույլ մակրոտնտեսական տվյալներն էին, քանի որ սպառողների վստահությունը, երկարաժամկետ օգտագործման ապրանքների պատվերները, նոր տների վաճառքը և մեծածախ առևտրային պաշարների մասին տվյալները սպասվածից ավելի թույլ արդյունքներ ապահովեցին:

Բաժնետոմսերի շուկա| 3-րդ եռամսյակի հաշվետվություններ

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի միջև եղած դրական եկամտաբերությունը աճել է (սպրեդը)(2-30), քանի որ շուկան այժմ ավելի մեծ ռիսկ է ակնկալում ոչ թե կարճաժամկետ, այլ երկարաժամկետ հեռանկարում:

Չնայած որ, ամբողջ շաբաթվա ընթացքում փոխարժեքի մակարդակի ակնկալիքը նվազում էին, մեծածախ առևտրային պաշարների տվյալները բարձրացրեցին տոկոսադրույքի իջեցման մակարդակը, ինչը ուղղակի ազդեցություն չունեցավ դոլարի արժեքի վրա:





Ոսկու համար 2024 թվականի վերջին շաբաթը գրեթե անփոփոխ էր, քանի որ ներդրողները դառնում են ավելի զգույշ նախագահական ընտրություններից հետո սպասվող փոփոխություններին և Fed-ի 2025 թվականի սպասումների հետևանքով:

Նավթի գինը վերջին շաբաթվա ընթացքում աճեց մինչև 71 դոլարի, որը կապված է Մերձավոր Արևելքում լարվածության հերթական աճի հետ:

Պարտատոմսեր | Դոլարի ինդեքս և ակնկալվող տոկոսադրույքի իջեցում

- Կրիպտոարժույթների շուկան վերջին շաբաթվա ընթացքում արձանագրեց ոչ միանշանակ արդյունքներ:
- Bitcoin-ը, XRP-ը և հիմնական կրիպտոարժույթները վերջին շաբաթվա ընթացքում նվազեցին, ավելին Bitcoin-ի գինը իջել է 100 հազար ԱՄՆ դոլարից ցածր, մյուս խոշոր կրիպտոարժույթները, ինչպիսիք են Solana-ն, Ethereum-ը և BNB-ն, դրական արդյունքներ են գրանցել:
- Bitcoin-ի գինը իջավ $100,000-ից ցածր, շաբաթվա ընթացքում BTC ETF-ից մի շարք արտահոսքեր եղան, սակայն ուրբաթ օրը BTC ETF-ները կրկին զուտ ներհոսքեր ունեցան:



Bloomberg-ի դոլարի ինդեքսը 2024 թվականին աճել է 7.4%-ով, որը արդյունքում այս տարին վերջին 9 տարիների ընթացքում դարձավ լավագույն:
Տվյալները KOBEISSI LETTERS-ի:



S&P500-ի ութ խոշորագույն բաժնետոմսերն այժմ կազմում են ինդեքսի ընդհանուր շուկայական կապիտալիզացիայի 35.7%-ը, որը շատերին հիշեցնում է 1999թ.-ի 22.2% ցուցանիշը:



Հետաքրքիր փաստեր

Զարգացող շուկաների և ԱՄՆ-ի բաժնետոմսերի հարաբերակցությունը հասել է ռեկորդային նվազագույնի, գերազանցելով 1999 թվականի մարտին սահմանված նախորդ նվազագույնի մակարդակը:



ԱՄՆ-ի տնտեսական օրացույց

Այս շաբաթվա ընթացքում 2 ընկերություններ պատրաստվում են հրապարակել իրենց 2024 թվականի երրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները: ԱՄՆ-ում ընկերությունների մեծ մասը արդեն ներկայացրել են 3-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները:

#1 / 2 Total save as portfolio | create alert Refresh: 3min | off Page 1 / 1

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price	Change	Volume
1	RGP	Resources Connection Inc	Industrials	Consulting Services	USA	283.17M	23.39	8.41	0.60%	294,027
2	LFCR	Lifecore Biomedical Inc	Healthcare	Drug Manufacturers - Specialty & Generic	USA	260.58M	122.15	7.28	-2.80%	191,295

Filters: earningsdate:nextdays5 export

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

MONDAY, DEC. 30				
9:45 am	Chicago Business Barometer (PMI)	Dec.	42.2	40.2
10:00 am	Pending home sales	Nov.	0.7%	2.0%
TUESDAY, DEC. 31				
9:00 am	S&P Case-Shiller home price index (20 cities)	Nov.	--	4.6%
WEDNESDAY, JAN. 1				
	New Year's holiday			
THURSDAY, JAN. 2				
8:30 am	Initial jobless claims	Dec. 28	225,000	219,000
10:00 am	Construction spending	Nov.	0.3%	0.4%
FRIDAY, JAN. 3				
10:00 am	ISM manufacturing	Dec.	48.1%	48.4%

060 408 005, 060 408 002, 010 592 301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.am